

վերացական յղացքին, - մարդուն)։ «ախր, մի մուժ բակ էր», տանիքէն միայն լուսնալու արտօննուած։ Դէպք, իր այդ վկայութեան վրայ յաւելում՝ չորս պատ, երբեմն քարով, երբեմն հող-աղիւսով, աւելի յաճախ՝ կաղնիի ոստերով հիւսուած, իրար բռնող՝ իրենց շրթներէն։ Անշուշտ գետինը թրծուած հող, որ տարուէ տարի կ'ամրանայ։ Բացէք ծակ մը գագաթէն։ Դուք կ'ունենաք այն խշտին, ուր լոյսին բացուեցան աչքերը մեր որբերուն։ Թերեւս օր մը պատմեմ այն բունն ալ, ուր իմ մաման զիս իր պլուզին փաթթելով դրած է միակ առարկայ հացի տաշտին մէջ։ Կը պակսէր օրանը։ Օրան իսկ չեն ճանչցած իմ ոսկորները։ Ու ասիկա արեւելեան մեծ քաղաքի բոլոր փարթամ պալատներուն կողքին։ Անիկա չբանաճեւեց պատճառը այդ կերպ լոյսին։ Ինչ փոյթ կովկասէն գալը։ Կարիք ալ չկար բացատրութեան, զի ես գիտէի, մեր բունիկէն, հոյաչէն թաղի մը ծայրին, հանուած, հրդեհ-լած ապարանքի մը աւերավայրէն, զոր շուներուն ժանիքներէն կը խլէին մեր մայրերը, կը գոցէին ինկած աղիւսներէն գոյացած ծակուծուկերը պատերուն, վրան կը նետէին փողոց ձգուած թիթեղի թերթեր ու կը ծուարէին այսպէս ստեղծուած պատսպարանին ներսը, երեքը, չորսը լայն-լայն անցնող իրենց զաւկրները անոր մէկ անկիւնը գետեղելով վրայէ վրայ։ Առջի մեծ պատերազմի վախճանին, Պոլիս շատ-շատ էր թիւը այս կարգի բնակարաններուն։ Երկրորդ մեծ պատերազմին սկիզբը Փարիզ ասոր մօտիկ պատկերներ գետին արմուկներուն ծոցը դարձեալ տեսայ։ Յիսուն-վաթսուն տարի առաջ, Պրուսայի մէջ անսովոր չէին այդ թշուառութեան բոյները։ Օրուան հացը երբեք զինը չէր օրուան վաստակին, նիհար ու պատահական։ Մենք կ'ուտէինք փիղերու պէս, ինչպէս կը պատկերեն տարւոքները մեր ուտելու անգլթութիւնը, անկըտութիւնը Աստուծոյ մէկ նոր պատուհասը դաւանելով։ Ո՛չ չորը, ոչ ալ պաղը այդ բոյներէն ներս չունէին ընելիք։ Իւղագօծ թուղթը շատ-շատ քանի մը օր, ձիւնին կատղած պահերուն...։ Ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ Մաթիկ Մելիքիսան-